



## Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

Բարսեղ Կեսարացու անունը Մաշտոցի անվան Մատենադարանի գրչագրերում հանդիպում է գրույան բազմազան ձևերով (Բասիլ, Բասիլիոս, Բարսիլոս, Բատղիոս, Վասիլ, Վասիլես, Բարսեղ և այլն): Սակայն ամենատարածվածն ու հնագույնը № 948 գրչագրում հանդիպող Բարսեղ ձևն է, որին և նետելում ենք<sup>1</sup>:

Դժվար է պատկերացնել Մեծ Բարսեղի կյանքն ու գործունեությունը առանց իր խոհ «Վարք»-ի հայերն գրչագիր բարգմանություն-խմբագրությունների, բազմաթիվ թղթերի, Գրիգոր Աստվածարանի «Դամքանական»-ի, առանձին թղթերի ու այլ սկզբնադրյուր գրու պարունակած մատենագրական եզակի վկայությունների հաշվառման:

Բարսեղ Կեսարացին ծնվել է 329 թվականին, Կեսարիայում<sup>2</sup>: «Մեծ Բատղիոս ծնեալ ի օրէ Պոնդա-

ցի և ի մօրէ Կապպադոկացի, ոչ յանցանից ոմանց, այլ ի մեծաց և յերեկեաց և ճշմարտութեան հաւատովն պայծառ»<sup>3</sup>:

Հայոցն է, որ Կեսարացու հայրը բացառիկ ընդունակ ու պատրաստված դեմք է եղել և ճարտասանական արվեստի իր արտակարգ ունակությամբ որոշակի հեղինակություն վայելել Պոնտոսում, Կապպադոկիայում և Փոքր Հայքում<sup>4</sup>:

տury, թ. I, Մ.—Լ., 1941, էջ 187), 320-ը (տե՛ս Ա. Սուրբեան, Սուրբ Բարսեղ և իր երկասիրութիւնը, «Բազմավէպ», 1877, հատոր 1Ե, էջ 323), 326-ը (տե՛ս Հուսիկ եպիսկոպոս, Անապատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 44), «ըստ ոմանց յամի 328 և ըստ այլոց 317» (տե՛ս Լիակատար Վարք և վկայարանութիւն սրբոց, ի Հ. Մկրտիչ վարդապետ Աւետիքան, յաշակերտութեան մեջին Միխիարայ Արքայիօր, հատոր Ժ, Վենետիկ, 1814, էջ 325), 330-ը (տե՛ս Ա. Արքիմադրիտ, Ժизнь святого Василия Великого, архиепископа Кесарий Каппадокийского и его пастырская деятельность, СПб., 1873, էջ 20. Ա. Կամենսкий, св. Василий Великий, арх. Кесарий Каппадокийский, его жизнь и избр. творения, СПб., 1894, էջ 3, Փ. Փարքար, Жизнь и труды свв. отцов и учителей церкви, СПб., 1891, էջ 453, Жития святых, празднуемых прав. русской церковью, под. ред. Д. И. Протопопова, Москва, 1892, էջ 7, Ե. Տեր-Միհայլ, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Բ. Ա., էջ միածին, 1908, էջ 269, Ս. Ռածից, История древнегреческой литературы, Москва, 1959, էջ 551, История Византий, թ. I, Москва, 1967, էջ 53:

<sup>3</sup> Զեռ. № 6036, էջ 205ա: Հմտ. ձեռ. №№ 4150, էջ 21ա, 3275, էջ 147թ, 621, էջ 55ա:

<sup>4</sup> Творения иже во святых отца нашего Григория Богослова, архиепископа Константинопольского, Слово 43, Надгробное Василию, архиепископа Кесарий Каппад., «Русский паломник».

Սակայն Բարսեղ Կեսարացու ծննդյան թվականի շուրջ եղել են զանազան կարծիքներ: Տարբեր ժամանակներում, առանց բանահրական նետախուզման, ծննդյան թվական են առաջարկվել՝ 299-ը (տե՛ս Մ. Սուրբատեան, «Պատմութիւն բրիստոնէական եկեղեցոյ, Գալաց, 1898, էջ 170), որը միայն վրիփակ կարող է լինել, 303-ը (տե՛ս Իстория русской литературы

Բարսեղ Կեսարացու մայրը՝ Էմիլյան, Շոյնակս կրթված, բրիտանությանը նվիրված անձնավորություն է եղել։ Նրա ծննդերը, շատերի նման, ժամանակին տաճարամահ են եղել ի սեր Քրիստոսի։

Պունտում են անցել Բարսեղ Կեսարացու մանկությունը ու նախնական ուսումնառությունը, որտեղի իր առաջին դաստիարակին ու ուսուցչությունը և այլ միջությունը ել նիշել է երախտագիտությամբ<sup>5</sup>։

Գրիգոր Աստվածաբնի վկայությամբ՝ Բարսեղ Կեսարացին մինչև կապադովյան Կեսարիա ուսանելու գնալը Պունտում, որը անմիջական նախաձեռնությամբ ուսումնառության առաջին փորձերը էր անուն, որը «ոչ նապատակ խփելու, ոչ այծ խրտեցնելու և ոչ էլ եղջիկ որսալու էր վարժեցնում...», այլ ուսուցանում էր գիտության սկզբանական որդութեարք և աստվածամիտություն սերմանում։ մի խորպի՛ ամենասույն դասերով իսկ մղում նետագա կատարելության»<sup>6</sup>։

Բարսեղը կարծ ժամանակում ձեռք է բերում գիտական որոշ պատրաստություն, և նայու միտք և նոյանում ուսումնառությունը շարունակելու նապատակով նոյանում ուղարկել Կեսարիա։

Ե՞րև և ո՞ր Կեսարիա։

Բարսեղ Կեսարացու մասին եղած մեզ ծանոթ գիտական գրականության մեջ նրա ուսումնառության համարվում է կապադովյան Կեսարիան։ Այս մասին կարելու են Գրիգոր Աստվածաբնի և Բարսեղ Կեսարացու հաղորդումները 4-րդ դարի կապադովյան։ Կեսարիայում գյուղություն ունեցող կրթական վիճակի՝ ու բարձր գիտական մտքի մասին։ Գր. Աստվածաբնը վկայում է, որ Կեսարիան համարվում էր հուսալուրության կենտրոն և կարող էր հապատանալ գիտնականների շատությամբ։ Ավելին, նա, խուելով Բարսեղի Կեսարիա ուսանելու գնալու մասին, ավելացնում է. «Խոսում եմ մեր հանրահայտ Կեսարիայի մասին, (քանի այս ինձ համար էլ ուղեկից ու դաստիարակ է եղել), որին առանց տարակութելու կարելի է անվանել գիտության օջախ և իր ենթակայության տակ գտնվող բնակավայրերի քաղաքակրթության օրրան»<sup>7</sup>։

Աստվածաբնի «մեր հանրահայտ» բնորշումը ինքնին ապացուց է այն բանի, որ խոսք կապադովյան Կեսարիայի մասին է, որովհետև ինքը՝ Գրիգոր Աստվածաբնն էլ նույն Կեսարիայից էր և գրում է իր ծննդավայր քաղաքի ու դաշներոջ՝ Բարսեղ Կեսարացու մասին։

Ուսումնասիրություն մեծ մասը կապադովյան Կե-

1912, էջ 607—609 (Ազստենև՝ Դամբանական), Migne, հ. 29, էջ VI—VII, Վարք սրբոց, 1814, էջ 326։

<sup>5</sup> Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарий Каппадокийской, изд. третee, Москва, 1892, թուղթ 196 (204) և 215 (223)։ (Ազստենև Վ. Վելիկի)։

<sup>6</sup> Դամբանական, էջ 610։

<sup>7</sup> Նոյն տեղում։

սարիան է համարում Բարսեղ Կեսարացու առաջին ուսումնառություն։ Հիրամի, կապադովյան Կեսարիան այն ժամանակ մեծ քաղաք էր և համարվում էր մշակույթային խոշոր կենտրոն։ Նոյն Կեսարիայում, ավելց, Բարսեղ Կեսարացու հայրը համարվում էր Հայավոր ճարտասաններից մեկը։ Նման պայմաններում, համարականի է, ոչինչ չէր կարող խանգարել Բարսեղի լիաժեք ուսումնառությանը Կեսարիայում, ուստի և հազիվ թե հարկ լիներ մտածել առանց հայրենի քաղաքում ուսանելու հրան որիշ քաղաք տանելու մասին։ Այսպիսով, Գր. Աստվածաբնի վերոբերյալ հաղորդումը, որին ոչ մի հիմք չունենք չիավատու, և ուսումնասիրությունների հավաստի պնդումները հիմք են տախու ասելու, որ Բարսեղ Կեսարացին ուսանել է կապադովյան Կեսարիայում, որ, անշուշու, կար բարձրագույն դպրոց<sup>9</sup>։

Գրչագրերում Բարսեղի Կեսարիայում ուսանելու ժամանակաւիշոց են ընդունվում մի դեպքում 5, մեկ այլ դեպքում 7 տարիները (և և և ամ)։ Խնչակն ենթարկել է տախու գրչագրերի համեմատությունը, դա արդյունք է «Ե» և «Հ»-ի շփոթի, սիամ ընթերցման։ Այսպես ինչպես բացարեկ Կեսարացու վարքի մասին պարունակած բազմաթիվ տվյալներով նոյնացող գրչագրերի զանազանվելը նշված կետում<sup>10</sup>։

Համոզիչ է այն վկայությունը, թե «Զառ ծննդը սրա է. ամեան եսուն յուսումն գրոց և է. ամ ի դպրոցի կացեալ և ժե ամեան եղեալ գնաց յլիթէն» ի մայն իմաստութեանց»<sup>11</sup>։

Այսպես ընդունելու դեպքում Բարսեղ Կեսարացին 343—344 թթ. ավարտում է Կեսարիայում սկսած ուսումնառության առաջին շրջանը։ Կարևոր է, սակայն, Բարսեղի, պայական կոչված, կեսարյան ուսումնառությանը վերաբերող Գրիգոր Աստվածաբնի հետևյալ բնորշումը. «Նա ճարտասան էր ճարտասաններից շատությամբ։ Ավելին, նա, խուելով Բարսեղի Կեսարիա ուսանելու գնալու մասին, ավելացնում է. «Խոսում եմ մեր հանրահայտ Կեսարիայի մասին, (քանի այս ինձ համար էլ ուղեկից ու դաստիարակ է եղել), որին առանց տարակութելու կարելի է անվանել գիտության օջախ և իր ենթակայության տակ գտնվող բնակավայրերի քաղաքակրթության օրրան»<sup>12</sup>։

Բարսեղ Կեսարացին առանց դգործելու ուսումնառության կեարյան շրջանից «Եւ ոչ ընդդիմադրեալ յուսումնասիրության ցամկայր հմտութիւններու վիճակութիւնից իր, զի էր ի Կեսարիա Կապադովյացուց»<sup>13</sup>։ Այս վկայությունը Սթենքի ուսումնառությանը է վերաբերում,

<sup>8</sup> Փ. Փարրար, Եշվ. աշխ., էջ 454։

<sup>9</sup> Ն. Աղոնց, Հայ գիտական դէմքեր Բնականիայում (տէ՛ս Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 501)։ Այսունաև «Կեսարիա»-ն հիշատելիս ի նկատ ունենք կապադովյան։

<sup>10</sup> Զեռ. №№ 948, էջ 148թ, 992, էջ 194թ, 3275, էջ 147թ։ Հմտ. ձեռ. №№ 84, էջ 253ա, 993, էջ 727ա, 4150, էջ 59ա—թ։

<sup>11</sup> Զեռ. № 9063, էջ 95ա։ Հմտ. ձեռ. № 992, էջ 194թ։

<sup>12</sup> Դամբանական, էջ 611։

<sup>13</sup> Զեռ. № 948, էջ 148թ։ Հմտ. ձեռ. № 993, էջ 727ա, Վարք սրբոց, 1874, էջ 222։

սակայն, ինչպես կտևնենք, նիմքեր կան ննշադրելու, որ նա ուսանել է նաև Կ. Պոլսում, որ կային ճարտասանության և փիլխոփայության շատ նշանավոր ուսուցիչներ, որոնց համբավի մասին խոսում էին քաղաքի սահմաններից շատ հեռու<sup>14</sup>:

Քիչ քան է նայում Բարսեղ Կեսարացու Պոլսուս ուսանելու մասին: Ուսումնասիրողներից շատերը բնավ չեն անդադանում Բարսեղի՝ Լիբիանոսին աշակերտելու խնդրին, ոմանք էլ, առանց քանասիրական հետազոտման, չեն ընդունում կամ, լավագոյն դեպքում, կասկածի տակ են առնում տվյալ իրողորդությունը<sup>15</sup>:

Սակայն, Կեսարացու վարքի հնագոյն գրչագրում քազմից խոսվում է Կ. Պոլսի համալսարանի հայտնի վարդապետ Լիբիանոսի և Բարսեղի ծանոթության ու մտերիմ փոխարքերության մասին: Ավելին, որոշակի ակնարկ կա նրանց գրադեմոն խնդրի շորջ. «իսկ Ղետնիու սկսանէր ի խնդրի ինչ ընդ նոսա (=Բարսեղի և այլոց հետ) ի քանի հուսորական և նորա առաջի ներավ գրանս յաղագ հաւատոց Քրիստոսի»<sup>16</sup>: Խել № 4150 գրչագրում Բարսեղի և նրա դասընկերների մասին ասված է. «Հանդիպեան հանձարեալ վարդապետի, որում անուն էր Լիբիանոս և ուսան ի համան զշումերուի ստորոգութեան ի հուսորական շարամեկնել, և սորա ուսուցին նման և աշակերտաց իրոց զպատութիւնն աստուածային գիտութեան»<sup>17</sup>:

Յ. Ֆարբարը Բարսեղ Կեսարացու երկրորդ ուսումնատեղին համարում է Կ. Պոլսիը, որտեղ և հավանական է համարում նրա և նշանավոր հուսոր Լիբիանոսի ծանոթությունը: Նա ձեռքի տակ ունեցել է այս երկու նշանավոր անձանց փոխադարձ համակագրության փաստեր, որոնց հավաստիությունը, մեզ անհայտ պատճառով, կասկածի տակ է առնում<sup>18</sup>:

Սակայն, Լիբիանոսին ուղղված Բարսեղի պատասխան թղթերը որոշակի վկայություն են երկու անձանց ծանոթության: Ավելին, պարզվում է, որ Բարսեղ Կեսարացի Լիբիանոսին աշակերտելուց հետո էլ շարունակել է նրա աշխատությունների ուսումնասիրությունը, երբեմն պահանջել որևէ նորավարտ գործ, ուսումնասիրել ո հիացմունքի խորեր գործ նրան: Թղթերում էլ, հարկավ, ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե ինըը երբ և որքան ժամանակ է աշակերտել Լիբիանոսին: Համեմայնեապ, դա պետք է լիներ 344—351 թթ., քանի որ 343 թվականին, ասվեց, դեռևս Կեսարիայում էր ուսանում, խել 352 թ., ինչպես կտևնենք, մեկնում է Աթենք՝ ուսանելու:

<sup>14</sup> Դամբանական, էջ 611:

<sup>15</sup> Գ. Զարքիանապանը բնավ չի երկմտում Բարսեղի Կ. Պոլսում ուսանելու, նշանավոր ճարտասան Լիբիանոսին աշակերտելու խնդրում: (Տե՛ս Պատմութիւն մատենագրութեան..., էջ 731:)

<sup>16</sup> Զեռ. № 948, էջ 151p—152a:

<sup>17</sup> Զեռ. № 4150, էջ 59p: Հմմտ. ձեռ. №№ 3275, էջ 147p, 9063, էջ 95a, 84, էջ 253p:

<sup>18</sup> Փ. Փարրար, Եշվ. աշխ., էջ 382, 455, հան' 978-ի 15-րդ ծան.:

Բարսեղ Կեսարացին որքան էլ աշակերտեր Կեսարիայի և Կ. Պոլսի նշանավոր ճարտասան-փիլխութաներին, այդումնեանցիվ, 4-րդ դարում անհնարին էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն առանց Աթենքի համալսարանի: Գրչագրերում պահպանվել են այսօրինակ վկայություններ ուսումնառության նպատակով Կեսարացու Աթենք մեկնելու մասին: «մայրն ուրա առեալ զնա էջ յԱթենք պարկեց-տորեամբ քազմա և ժումկալութեամբ զարդարեալ, եւ երթեալ առ իմաստաւէր վարդապետն հեղենացոց, որում անուն էր Եւուղոս, և սուեալ զնա (=Բարսեղին) յուսուն փիլխոփայութեան»<sup>19</sup>: Մեկ այլ գրչագրի համաձայն՝ Բարսեղ Կեսարացին «ԺԵ ամեա եղաւ զնաց յԱթենք՝ ի մայրն իմաստութեան»<sup>20</sup> և այլն:

Աթենքի համալսարանում դասավանդում էին. ա) քերականություն, որ այն ժամանակ նշանակում էր դասական հուսարենի, պոեզիայի կանոնների, եկեղեցական պատմության, գրականության, ընդհանուր պատմության ըստ ամենային ուսումնասիրում և պատմա-բանասիրական բնության հմտացում, բ) ճարտասանություն և փիլխոփայություն: Ճարտասանությամբ հարց ու պատասխանի ձևով վիճարանելու հասուկ արվեստ էր մշակվում, որը, պրոֆ. Ն. Սղոնցի բնորոշմամբ, «հարկաւոր էր ոչ միան ներանու ալյանքարենների, այլ և քրիստոնեաց ներձուածների դէմ պայքարելիս»<sup>21</sup>: Գր. Աստվածարանը վկայում է, որ Բարսեղը գիտության յուրաքանչյուր բնագավառ ուսումնասիրում էր կատարելության աստիճանի: Ով կարող էր չափվել նրա հետ ճարտասանության բնագավառում, փիլխոփայության մեջ ով էր ավելի ուժով, քան նա: Թերևս ավելի հեշտ կիներ դորս գալ լաբրինթոսից, քան նրա փաստերի կապակցումից՝ երբ ինքը դրանց կարիքը գտար<sup>22</sup>:

Բարսեղին դասավանդում էին հայազգի Պրոյերեսիուսը<sup>23</sup>, իմաստասիրության վարդապետ Եվուղուսը<sup>24</sup>, ճարտասանության փառարանամբ ուսուցիչ Հիմերիոսը<sup>25</sup> և այլք, որոնց Գր. Աստվածարանը հոչակալիոր է անվանում: Եվուղուսը Բարսեղ Կեսարացուն «...դիրութեամբ հաւանեալ այնչափ, մինչեւ զարմանալ ընդ նա՝ վարդապետին և աշակերտացն, քանզի էր նորա աշակերտակից Գրիգորիոս Մեծն»<sup>26</sup>:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ Աթենքի փառանաված համալսարանի ուսուցիչների մեջ այն ժամանակ կային ներանուններ, որոնք դասավանդում էին վաղուց քրիստոնեաց ընդունած պատանիների: Հեթանուական հավատի երկրպագու էր նաև

<sup>19</sup> Զեռ. № 948, էջ 148p:

<sup>20</sup> Զեռ. № 992, էջ 194p:

<sup>21</sup> Ն. Սղոնց, Եշվ. աշխ., էջ 503:

<sup>22</sup> Դամբանական, էջ 617—618: Հմմտ. Տ. Վարդապետ, Եշվ. աշխ., էջ 731:

<sup>23</sup> Վարք սրբոց, 1814, էջ 327—328:

<sup>24</sup> Զեռ. №№ 948, էջ 148p., 2046, էջ 56ա:

<sup>25</sup> Տ. Ռածից, Եշվ. աշխ., էջ 548, 551, 552:

<sup>26</sup> Զեռ. № 948, էջ 148p:

հիշյալ Եվոլողոսը: Բարսեղ Կեսարացին «Խնդրէք և զետուղոս վարդապետն իր, վաս զի նա էք առաջ բանին, փոխարէն աշխատութեան նորա քերեալ զամբիծ հաւատուն, զի դարձուցք զնա լուիդ հաւատու»<sup>27</sup>: Այլ վկայությամբ՝ Կեսարացին «Մեծա չափի արար զնա (=Եվոլողոսին) քիչոտնեալք»<sup>28</sup>:

Գրիգոր Աստվածաբանը համեմատարար ընդարձակ մանրամասներով է ներկայացնում Բարսեղի Աթենքից վերադառնալը: Դա մոտավորապես 356 թվականին էր: Նրա այն դիտողությունը, թե «Բարսեղ նաև էր՝ գիտությամբ ծանրաբեռնված»<sup>29</sup>, որոշակի ակնարկ է Աթենքում նրա ստացած ուսումնառության մասին:

Աթենքան ուսումնառությունը, մասնավորապես փիլիսոփայության դասընթացի տիրապետումը, ինչպես նաև անապատական կյանքի նկատմամբ ուսուցած երեսների հնագույնությունը Բարսեղ Կեսարացուն ստիպեցին վաճական կյանքին ըստ ամենայնի հաղորդակցելու նապատակով, ինձնել Ակերասնդրիայում, Եգիստոսում, Պալեստինում, Սարդիքում:

Նա արտակար զարմանքով, համան է հիմացնությունը և պատմում իր այցելած վայրերի մենակացների մասին: Զարմացնող առանձնապես նրանց չափակոր սննդի, աշխատանքի համբերատարության, անտրուունց աղոթելու և մշտապես աղքատության մեջ է:

Բարսեղ Կեսարացին մոտ 360 թվականին վերադառնում է Կեսարիա: Արևելք կատարած ճանապարհորդության հիման վրա նա հաճաց երկու կարևոր հետևության, ա) թե մարդիկ չափութ է անապահան առանձնության մեջ ապրեն, բ) անձնուրացության և անձնաշարշար լինելու չափազանցություններին վերջ դնելու համար պիտք են կանոնները<sup>30</sup>.

Դա այն ժամանակ էր, երբ Կեսարիայի թեմի արքափառությունը տեղի համար նորովկում էին Եվսեբիոսի և ս. Բարսեղի անունները: Գր. Աստվածաբանի վկայությամբ՝ «Եվսեբիոսի ընդդիմանում էր եկեղեցու ընտրյալ և իմաստուն խավը...»<sup>31</sup>: Բարսեղ Կեսարացու թեկնածությունը համեմատարար ավելի շատ կողմնակիցներ ուներ, և դա համարակալի է. Երան մոտ ըստ էության գնամատվում էր սիստեմատիկ կրթությունն ու լավատելյակությունը եկեղեցու գործերին: Սակայն ընտրվում է Եվսեբիոս Կեսարացին:

Գրիգոր Աստվածաբանը վկայում է, որ Բարսեղի և Կեսարիայի թեմի նորընտիր առաջնորդ Եվսեբիոսի միջև անհամաձայնություն առաջացաւ: Թե ինչպես և ինչ խնդիր շուրջ՝ գերադասում է լուրեց:

<sup>27</sup> Ձեռ. № 948, էջ 149ա: Հմմտ. Վարք սրբոց, 1874, էջ 223—224:

<sup>28</sup> Ձեռ. № 992, էջ 195ա: Հմմտ. 2046, էջ 56ա, 4150, էջ 59բ:

<sup>29</sup> Դամբանական, էջ 618:

<sup>30</sup> Փ. Փարք, Աշխ., էջ 459: Հմմտ. Հուսիկ Եպիսկոպոս, Աշխ. աշխ., էջ 45:

<sup>31</sup> Դամբանական, էջ 621:

<sup>32</sup> Դամբանական, էջ 621: Հմմտ. Վարք սրբոց, 1814, էջ 335:

Բնակ չիորացնելով Եվսեբիոսի մետ ունեցած անհամաձայնությունը, Բարսեղ Կեսարացին թողնում է Կեսարիան և պարփակվում Պոնտոսի իր մենաստանում:

Նա հիացմունքով է խոսում իր նախընտրած մենաստանի մասին. «Ամենից կարևոր այն է, որ,— գրում է նա, —տեղն այս իհն համար ծնուն է պատուելից բաղրագույնը՝ անդորրը, քանզի ազատված եմ ոչ միայն բաղրապահին ժխորից, այլ բացակայում է անմիորուն անցամ...»<sup>33</sup>:

Բարսեղ Կեսարացին մենաստանում տարված էր ս. Գրիգորի ու նրա մեկնարանների աշխատությունների ուսումնասիրությամբ, երբ արիուականության տարածման և, Վաղեն կայսրի ընկերակցությամբ, արիուական հայկակոպունների Կեսարիա ուղևորվելու լուրը հասավ նրան: Վկայությունների կան, որ եկեղեցուն վերամաս ծանր վատանգի կանչնազգացումը Եվսեբիոսին ստիպակ է խնդրել Բարսեղ Կեսարացուն վերադասական Կեսարիա և կյանքներ սպասնացող վտանգը<sup>34</sup>: Ու հաստատվում է նաև Գր. Աստվածաբանի հայորդմամբ: Բարսեղ Կեսարացուն ուղղված թթուս նա գրում է. «Աստվածասերն մեր Եվսեբիոսի եպիսկոպուն հակառակ հակիմական է մեզ մետ հաշվվելու և բարեկամանապու ու փափկում է ժամանակի մետ, ինչպես երկար կրակի մեջ: Կարծում եմ՝ դու կատանա թուղթ՝ խնդրական ու հրավիրման. այդ մասին իհնը իհն հայտնեց...»<sup>35</sup>: Թուղթը, ամրոջությամբ, արիուականության ուղղված դաստիարակությունը է և խնդրանք՝ գալու ու պաշտպան կանցնելու ուղղափառ եկեղեցու վարդապետությանը:

Իրականում Եվսեբիոս Կեսարացին եկեղեցու համար դժվարին պայմաններում վերանայել է իր և Բարսեղի դժմարաբերությունը, հստակել Կեսարացու նորովկող բամբասանցների խկորվունը և կյանքել նրան: Մի գրչագրում Եվսեբիոսի մասին պահած է. «Բայց իրեւ ետև եպիսկոպուն ուղղել Բարսեղ և տառ զմանիշան, դարձաւ սիրով առ նա և գրեաց զայ յեկեղեցին»<sup>36</sup>:

Բարսեղը Կեսարիա է վերադառնում 364 թվականին և, հակառակ իր իսկ ընդդիմացուններին, նույն թվականին է ձեռնադրվում է երեց<sup>37</sup>:

Կեսարիայի թեմը վատանգում է նրան, թեև արքափառություն Աթոռը շարունակում էր զրադեցնել Եվսեբիոս Կեսարացին. «Ստացվեց իրավունքների (բառացի՝ իշխանության) զարմանակի ներդաշնակություն և կապ. մեկը՝ «Բնոտին» էր դեկալարում, մյուսը՝ «Բնովկաներին»»<sup>38</sup>:

<sup>33</sup> Վ. Վելիկի, թուղթ 14:

<sup>34</sup> Փատոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 106: Հմմտ. Վարք սրբոց, 1814, էջ 338:

<sup>35</sup> Գր. Եօգոսլու, թուղթ 15 (19):

<sup>36</sup> Ձեռ. № 437, էջ 323բ:

<sup>37</sup> Գր. Եօգոսլու, թուղթ 11 (11):

<sup>38</sup> Դամբանական, էջ 624—625: Հմմտ. Փ. Բոլգանյ, էջ 108:

Վկայություն կա, որ «...եղու ի չար արանց շարախաւորթին զբարսէ առ տորքն Եւսերիոս, որպէս թէ խորին նա առնով զարոռն Եւսերեայ, վասնի համոյ էր Բախիլիոս յաչու ամենեցուն»<sup>39</sup>: Անա յու ինչու Եվսերիոսը նախանձով, երբեմն Էլ շարությամբ է նայել Բարսեղ Կեսարացու օրավոր քարձրացու փառքին ու ժողովրդայնությամբ: Ուստի և, ինչպես պատճառարանվում է Ակզենարդյուրներում, Բարսեղը, տեսնելով արքային կուպուսի իր նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքը, կարճ ժամանակով կամովին նեռանում է եկեղեցու և պարփակվում իր երբեմնի մենաստանում<sup>40</sup>:

Եվսերիոսի վերաբերմունքը, անցուած, ուներ Էւական Զշանակություն Կեսարացու համար, բայց վերջինին առանձնանալը սուկ դրանով պատճառարաննելը համոզի չէ: Նկատել ենք, որ Բարսեղ Կեսարացին 364 թ. Կեսարիա է վերադառնում Գր. Աստվածաբացի խնդրանքով՝ եկեղեցուն սպառնացող վտանգը կանխելու և նոյն թվականին էլ երեց ձեռնադրվում: Հենց դա էլ խոսում է այն մասին, որ նա, փաստուն, աշխատում էր միաժամանակ չառնչվել ոչ աշխարհիկ կյանքին, ոչ էլ եկեղեցու գործերին, այլ ինել առանձնության մեջ: Գր. Աստվածաբացին հասցեագրած թոյերից մնակում Կեսարացին գրում է. «Եսկ այսցիկ մի է փախտսատ, որոշումն յաշխարհայնոց ամենեցունց և յաշխարհէ գնացումն, ոչ արտաքոյ սորա լինել մարմնապէս, այլ վշտակցութեամբ առ մարմին զանձնն դարձուցնել, անքաղաք, անստուն, ամինչ[թ], ան[ըն]կերասէր, անստացուածն, վարս անիրական, անփոփոխելիս, անուսուն մարդկայնց վարդապետորեանց, պատրաստ առ ընդունել սրտի զատուածայնոցն վարդապետորեանցն ենք եղեալ տպաւորութիւնն»<sup>41</sup>:

Նման պարագայում Եվսերիոսի վերաբերմունքը սուկ ատիք է, իսկ ո՞րն է Բարսեղ Կեսարացու՝ մարդկանցից խոսափելու, առանձնության ձգտելու բուն պատճառը: Սոկա մատենագրական տվյալները հիմք են տալիս ասելու, որ հիմնական պատճառը Վաղեսի թագավորության շրջանի անմարդկային հալածանքն էր ուղղափառ եկեղեցու նկատմամբ, որի նպատակը արիուսականության հաստատումն էր: Կեսարացու անսպատական հետաքրքրությունը ոչ թե փախտառ էր եկեղեցու քաղուս հոգուերից, այլ վաճեքի ու վանական հաստատությունների հիմնումով յորահատուկ պայքար էր արիուսական նկրտությունի դեմ: Որովհետև «...յորման Վաղես թագաւորեաց զԱրիուսին խորենով՝ հալածան յարոյց ուղղափառաց: Չոր իմացեալ սրոյն Բախիլիոսի ի կողման Պոնտուսի երեւալ անապատանցու յոլով շիներ, զի մի և անո գոյցի հայտնութեանն Արիուսի»<sup>42</sup>: Այլապէս ինչպէս բացատրել այն փաստը, որ Կեսարացու անա-

պատական նշված գործունեությունը առավել ևս զպարեց վայես կայսրին:

370 թվականին, Եվսերիոս Կեսարացու մահվանից հետո, և Բարսեղը ստանձնեց Կեսարիայի թնմը<sup>43</sup>:

Կեսարացուն վրդովեցնում է հոգնոր դասի, հատկապես նրա վերնախավի փողամոլությունը, զանազան ամսագիլի միջոցների դիմելը, անաշխատ «վաստակը» և ընդունադրության շուրջ սակարգելը:

Բարսեղ Կեսարացու հոգնոր գործունեության ամենապայծառ էջերից են արիուսականության դեմ նրա մղած տևական պայքարն ու հաղթանակը: Վայես կայսրը երկար ժամանակ չկարողանալով արիուսականություն բարողող իր նկախկառուներին հաստատել Կեսարիայում, Արևելքը արշավանքի գնալիս վերջին փորձն է անուն նշված ճանապարհին: Հայտնի է, որ այդ ժամանակ նրա երկրպագուները կարողացել են նշանավատի շատ նշանավոր եկեղեցիների նկախկառուների տեղահանել և զրադեցնել նրանց տեղութեանը Բարսեղ Կեսարացին նախապես տարեք քաղաքներում կարգեց այսպիսի եկեղեցիներ, որոնք ընդունակ լինեն արիուսականութիւնի դեմ մղելու դաշնաբանական պայքար և պահպանելու իրենց հավատի անադարտությունը:

Վայես կայսրը, ճախրան Կեսարիա գնալը, իր նշանավոր մարդկանցից Մոդեստին է ուղարկում Բարսեղի մոտ՝ արիուսականությունն ամրող Արևելքում տարածելու իր ծրագրի շուրջ նախապես խորհրդակցելու:

Գր. Աստվածաբացը Կեսարիայում ականատես է ինուս Բարսեղի և Մոդեստի վեճին ու հետաքրքիր մահրամասներ գրառում այդ մասին: Ա. Բարսեղի բացառիկ հանգստությունը, բանավիճելու արտակարգ հնտությունը կայսրի ներկացացուցին ստիպում են խոստվանելու. «Պարտված ենք մենք, արքա, այս եկեղեցու վանահորից: Սա այս է մի, որը վեր է սարսափից, ամենահաստատունը՝ փաստարկներից և ուժեղագունը՝ համոզունքներից»<sup>44</sup>: Բարսեղին խորապես ցավ էր պատճառում Արևելքի տասնյակ ուղղափառ եկեղեցիների կործանումն ու և և հայերի վախճանը: Անա թե ինչու Բարսեղ Կեսարացին համարձակությունն ունեցավ Վաղես կայսրին պահպան առերես սրտու: «...և դու, անիրաւ, նոսուր զեկեղեցին մեր արիանուաց»<sup>45</sup>:

Բազմաթիվ Ակզենարդյուր-Վկայությունների համաձայն՝ Բարսեղը ի սկզբան վատառողջ է եղել, մասնուկ հասակում հաճախ մերձիման խորացել: Դրա լավագույն Ակզենարդյուրը ինըն է՝ Բարսեղ Կեսարացին, երբ հաճախ է ստիպված ինուս խոստվանելու, որ բազում էական գործեր կիսակատար են մնում, քանզի նիվանդությունը խանգարում է: Մի առիթով նա գրում է. «...Հիվանդությունը անբաժան է ինձանից սկսած վաղ հասակից մինչ ծերություն...»<sup>46</sup>:

<sup>39</sup> Զեռ. № 4150, էջ 77թ: Հմմտ. ձեռ. № 437, էջ 323թ:

<sup>40</sup> Փ. Բուգանդ, էջ 104—105:

<sup>41</sup> Զեռ. № 5595, էջ 346ա:

<sup>42</sup> Զեռ. № 4150, էջ 21թ:

<sup>43</sup> Զեռ. № 948, էջ 154ա:

<sup>44</sup> Դամբանական, էջ 634:

<sup>45</sup> Զեռ. № 84, էջ 258թ:

<sup>46</sup> Յ. Վելիկի, Թուլլի, 195 (203):

Գր. Աստվածաբանը գրադի է Բարսեղ Կեսարացու մահամերձ Վիճակի, մահվան և թաղման մանրամասները: «Նրա համար ամբողջ քաղաքն էր անհանգամած ծանր էր կորուստը... մտածում էին փրկվել նրա հոգին, թվում էր՝ հնարավոր կիմեր բռնել և բռնությամբ պահել նրան ձեռքիրով կամ աղոթքներով (վիշտը նրանց անմիտ էր դարձել) և, բռնու դեպքերում, եթե միայն հնարավոր էր, պատրաստ էին անգամ իրենց կանքը տպալով»<sup>47</sup>:

Բարսեղ Կեսարացին մահացավ 379 թվականի հունվարի 1-ին, հինգշաբթի օրը, «վասնի էր ծերաց-եալ սորքը Բարսեղ և էր ցաւագար մարմնով»<sup>48</sup>:

Զնայած վատառողջության ու եկեղեցու բազում հոգութիւն, Բարսեղ Կեսարացին թողել է բավական հարուստ գրական ժամանակություն: Դռևս միշնադարում, ինչպես հուշում է 1279 թ. ընդօրինակված № 5595 գրչագիր մի հիշտավարանը, փորձ է արվել խմբակություն Կեսարացու մատենագրական ժառանգության հայտնի մասը, և կազմվել են նրա գործերի գրչագիր ծողովածուներ<sup>49</sup>: Նշված գրչագիր պարունակությունը են՝ «Վեցարեաշ-ն, «Գիրը հարցողաց»-ը, բազմաթիվ ճառեր, քարոզներ, մեկնություններ, թղթեր և այլն: Այդուամենայնիվ, հիմքեր կան ենթարկելու, որ Կեսարացու ոչ բոլոր գործերը են հասել մեզ, այն էլ հեղինակային անտարտությամբ: Նա մի առիթով թվարկում է տասնյակ տեղանուններ, որոնց եպիսկոպոսների հետ (այդ բայուն նաև հայացքի) թղթակցական կապ է ունեցել: Այսոր առկա են իր իսկ հիշյալ թվարկությունները, բայց բուն թղթերը չեն պահպանվել:

Սարդու և մարդկային փոխհարաբերությունների համապարփակ բնութագիրն է առկա Կեսարացու ճառերում: Ամենասարապափելին մարդկային կենցաղում, ըստ ս. Բարսեղի, հարբերեղությունն է իր բոլոր կործանարար հետևանքներով: «Ասքեցուին, —գրում է առ, —չարտիքեան մայր, առարինութեան ընդիմակ. զարին երկիոտ ցուցանէ, զորշախտնին՝ պակլուտեալ, զարդարութիւն ոչ գիտէ, զիմաստութիւն ի բաց բառն, բանզի զոր օրինակ՝ շուր պատերազմող է հրոյ, սոլնիս անշափութիւն գինոյ գլուրիուրդս շիշուցանէ»<sup>50</sup>: Բարսեղ Կեսարացու համար ամենից ցավակին ու վիշտ պատճառողն այն է, որ կյանքի ճշմարիտ ուղու շեղվում, հարբերեղությունն են նախընտրության ընդունակ ու բանհմաց պատասխներ, որոնք այլ պայմաններում չափազանց օգտակար կարող են ինձնել մարդկանց համար, սակայն «...ըմբել սկսանին և ըմբեն անասնոց օրինակա և կոչեն իբրև զսիրելի լընթրիսն, արտաք հանեն մեռեալ, գինովն զեկանու նորա շիշոցանելով»<sup>51</sup>: Մարդկային անաղարտ կենցաղի համար մտահոգվող հոգևոր գործիչը, չկորցը-

նեղով մարդու նկատմամբ ունեցած իր մեծ հավատն ու սերը, դիմում է դարձյալ մարդկային ողջախոն բանականության փրկարար զորությանը՝ աղերսելով պայքարել ինքնամոռաց գինարբութի դեմ, փրկել կործանաման եզրին կանգնած ցեղակից էալին: «Ով մարդ, պատերազմ արեր զգիներրուն, արտաք հանեն զերիտարդան ձեռին օժանդակելով՝ որպէս վիրաւոր ի պատերազմ...»<sup>52</sup>:

Կեսարացու ճառերում պահպանվել են վկայություններ, որոնք որոշում է պատերազմում են տախու 4-րդ դարի Արևելքի մարդկանց աշխարհիկ համաստրությունների մասին: Նրանցում համար խուլում է այն մասին, որ մարդիկ գինարբութի ժամերը ամենուր անց էին կացնում աշխարհիկ, պատասխան երգ ու երածտության ուղեկցությամբ: Ականատես հոգևոր գործին պակաս զայրութ չի պատճառու և այն, որ հիշյալ որպատրություններին անմասն, պարզապես ականատեսն ողովուրդն անզամ ծիծաղուն, հրճվում էր կատարվածով, միշչեռ, ըստ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի, «արտասուել էր պարտ, հասաչել ի վերա եղելոցն», բանզի «երգ պողընկոթիւն և գորհնութիւն, զոր ուսարա...»<sup>53</sup>:

Ժամանակի բարեկըր, մարդկային փոխհարաբերություններն ու բարդական ցածրացումները մուծելու, ողազու շատ բան են տախու, ու ինըը՝ մարդու անբախը հարաբերությունների համար պայքարող Բարսեղ Կեսարացին, զգիտի որը ողբալ: «Զորս ողբացից զաշշկուն անփորձ ամուսնութեան էին կայանք, բանզի ունանք երթեալ գնացին զերուտութիւն ոչ ունեղով և ունանք զպարկեցտութիւն արանցն ոչ դարձուցին...»<sup>54</sup>:

Աշխատափրությունը, սեփական աշխատանքով ապրելը, ըստ Կեսարացու առանձին ճառերի, մարդկային արժանապատվության գրավական են: Ինքնին հակակրան, խոր հիմարափություն են պատշաճում անաշխատ կյանք վարելը, այլոց աշխատանքով ապրելը: Դն այնքան նկատելի ու էական կողմէ է, որի հիշեցման անհրամեշտությունը պետք է առմիշտ բացառել մարդու համար: Բայց, որքան էլ ցավակի է, բանականությամբ օժուված մարդ արարածը հեռևս չունի բնազրով առաջնորդվող մրցունի աշխատափրությունը և նետուող է արտասվոր կեցցաղի: Կեսարացին աշխատափրություն արմատափրելու և բարից իսրահուտեն նպատակով լոկ՝ Աստծո արարած մարդուն երբեմն ստորադնում է անընկատ կենդանիներից, բանզի «երգ մրշին կարէ ոչ մուրանալով և ոչ վարձու առնուով կերակրիլ, և մեղուր զեշիար իրոց կերակրոյն թագաւորաց և շնորհեն, որոց ոչ ձեռս և արուեստ բնութիւնն են, իսկ դիրահն[ա]ր կենդանի մարդ մի յամենեցուն հնարից ոչ գտանես առ ի կենցաղոյս սնունդ»<sup>55</sup>:

<sup>47</sup> Դամբանական, էջ 653:

<sup>48</sup> Չեռ. № 992, էջ 199р:

<sup>49</sup> Չեռ. № 5595, Բարսեղ Կեսարացի՝ Մատենագրութիւնը, էջ 1ա—400р:

<sup>50</sup> Չեռ. № 2549, էջ 90ր—91ս:

<sup>51</sup> Չեռ. № 2549, էջ 94р:

<sup>52</sup> Ան:

<sup>53</sup> Չեռ. № 2549, էջ 95ա:

<sup>54</sup> Չեռ. № 2549, էջ 95բ:

<sup>55</sup> Չեռ. № 2549, էջ 126ս:

Բարսել Կևարացու ճառերում, որը քննվում է նորագույն բնույթի հարցեր, միշտ էլ առկա է նոյինակի խրատական-դաստիարակչական որոշակի ընդունակադրումը, վատը անգունելու և քարին սրբագրութեալու համար համարական համարը համարապրությունը: Նրա ճառերի ուսուցողական հապատակը հայոց շրջաններում առանց ենթիմաստի է ընկալվել դեռևս միջնադարում: Մի գրչագրում առկա է հետևյալ պատկերավոր համեմատությունը. այնպիս, ինչպես հոդագործն է շահում ժամանակից քաղեանել արտօր, որպեսզի փոխը շտարածից ու չափականի հասկը, կամ թժիշն է վիրահանում նիշանի օրգանը ի սեր մարմնի պապարին-ման, Բարսել Կևարացին էլ «...տեսաւ զրադարացին վաշխ և ի տոկոսի ախտացեալ խօսի առ նուսա, զի դադարեցուց յախտէ և սկիզբն առն: ի մարգարէական բանիցն և ցուցան: ի գրոց զախտին այս չարութին, խրատէ և զկարուեան ոչ առնուլ վաշխովք»<sup>56</sup>:

Հայերն հնագոյն թարգմանությամբ մեզ են հասել Բարսել Կևարացու ոչ թիզ թվով մեկնություններ, դավանարական գործեր և վկայարանություններ, որոնք Սրբելքի բրիտանացման ժամանակաշրջանում բացառիկ կարևոր հշանակություն ունեին: Ամենից շատ բրիտանության տարածման շրջանում էր պետք բացատրել հավատի կարևոր հշանակությունը և եկեղեցու դերը վերջինիս շորք ծագող վւճերը կանունու ու միակ ճշմարիտ ելքը մատնացոյց անելու գործում: Կևարացին հատկապես ընդգծում է այն միուրեց, որ իր խոսքը ոչ թե «Երկրաշափական հարկաւորութեամբք» ճնշող, այլ «հոգուց զօրութեամբ» գործող հավատի մասին է:

Մի գրչագիր վկայությամբ պասպիսի բնութագիր է տրվել Կևարացու՝ վկայարանությունների նկատմամբ ունեցած հետաքրքրությանը. «Մեծն ամենայն հայուսակուաց և վկայասէրն Բասիլիոս յամենայն հնարքը անյագ զինքն ցուցանել ի վկայական պատ-

ուափրութիւն»<sup>57</sup>: Կևարացին երեւմն ընդհատելով իր վկայարանական վերապատմում-բացատրությունները, տալիս է ժամանակի եկեղեցու դժվարին կացության, հավատի սակարկման համառուս բնութագիրը: «Հորին պատրաստ էր,—գրում է նա,—սուրբ սրբաւ էր, խաչ կանգնեալ էր խորիսրատն, անհին, բուրքն ունան փափչէն, իսկ ունան խոնարի էին, ունան դդուիին»(<sup>58</sup>), իսկ ունան յառաջ, բան գիտորձն միացն ի սպառնալան սարսէին...»<sup>59</sup>:

Կևարացու մատենագրական ժառանգության պատկանի մասն են կազմում կանոնները, որոնցում բննված են ժամանակի հոգեսոր ու աշխարհիկ բնագավառներին վերաբերող սոցիալ-տնտեսական, պատմական, իրավական, բարոյական, ամուսնական և այլ հարցեր: Բարսել Կևարացու գլուխ-գործոց երկասիրությունն են կազմում «Վեցարեայ» նաևը՝ «թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ, ի ձեռն ճշմարտարանից թարգմանչաց մերոց»<sup>59</sup>: «Վեցարեայ»-ում արծարձկած են շրջապատող աշխարհի, բնության ամենարազմազան ստարկաների, երևոյցների, բոսա-կենդանական աշխարհի առանձնահատկությունների, տիեզերական նարմինների հարատև փոփոխությունների, մարդկային փոխնարարեւությունների, տնտեսական նորմերի, կենցաղի, սովորությունների և անգամ լյանքի ու մանկան առենդվածի հետ կապված ամենարազմազան հարցեր, որոնց բննությունն դրու է ենրկա նպատակից:

Ս. Բարսելի մատենագրական ժառանգությունը, բացառությամբ «Վեցարեայ»-ի, «Պատարագամատոյց»-ի և հատուկն անելու ճառերի, իր գերակշռող մասով տակալին մնում է գրչագիր մատյաններում, թերևս որի պատճառով էլ հայ իրականության մեջ առ այսօր մեզ անհայտ է նրա մատենագրության ամբողջական գնահատման որևէ փորձ:

<sup>56</sup> Զեռ. № 4150, էջ 82ա:

<sup>58</sup> Զեռ. № 5595, էջ 371թ:

<sup>59</sup> Զեռ. № 10258, էջ 2ա:

